ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ
ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԱՐԱԳ ԱՐՁԱԳԱՆՔՄԱՆ ՀԱՆՁՆԱԽՄԲԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Փաստաբանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի ութերորդ մասի 11-րդ կետի, «Փաստաբանների պալատի կանոնադրության» 17.5 կետի 12-րդ ենթակետի պահանջները,

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի (այսուհետ՝ Պալատ) նախագահի 23.06.2015թ. թիվ 176-Լ որոշմամբ հաստատված՝ «Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի արագ արձագանքման հանձնախմբի գործունեության մասին» կարգի 2.2 կետի դրույթներով,

հաշվի առնելով այն հանգամանքը, որ ժամկետը լրանալու հիմքով դադարել են Պալատի արագ արձագանքման հանձնախմբի համակարգողի լիազորությունները,

նկատի ունենալով փաստաբան Գևորգ Մկրտչյանի համաձայնությունը,

Ո Ր Ո Շ Ե Ց Ի՝

1. Երկու տարի ժամկետով Պալատի արագ արձագանքման հանձնախմբի համակարգող նշանակել ՀՀ փաստաբանների պալատի փաստաբան Գևորգ Մկրտչյանին (արտոնագիր՝ 1229):

2. Հանձնարարել ՀՀ փաստաբանների պալատի աշխատակազմի ղեկավարին՝ սույն որոշման մասին իրազեկել փաստաբան Գևորգ Մկրտչյանին:

Հայաստանի Հանրապետության
փաստաբանների պալատի նախագահ՝

Սիմոն Բաբայան

10 փետրվարի 2023թ.
թիվ 36-Ա
ք.Երևան